



DIocese OF THE ARMENIAN CHURCH OF AMERICA  
ԱՌԱՋՆՈՐԴՈՒԹԻՒՆ ՀԱՅՈՑ ԱՄԵՐԻԿԱՅԻ ԱՐԵՒԵԼԵԱՆ ԹԵՄԻ

Archbishop Khajag Barsamian, Primate

Թիւ 2036  
Ապրիլ 18, 1995

Արժանաշնորհ  
Տ. Աւետ Բհնյ. Թէրզեան  
Հովիւ Ա. Փրկիչ Եկեղեցւոյ  
Նախագահ Ծխական Խորհուրդի  
Ռատըր.

Սիրելի Տէր Աւետ,

Ստացած ենք համայնքիդ Անդամական Ժողովի տեղեկագիրները եւ Ապրիլ 11, 1995 թուակիր ձեր նամակը, որով կը տեղեկացնէք թէ համայնքիդ Տարեկան Անդամական Ժողովը գումարուած է Փետրուար 12, 1995-ին, եւ այդ առթիւ ընտրուած են Ծխական Խորհուրդի հինգ անդամներ: Կու տաք նորընտիր անդամներուն անունները եւ կը խնդրէք անոնց վաւերացման պաշտօնագիրը:

Այս գրութեամբ կը վաւերացնենք Ծխական Խորհուրդի հետեւեալ անդամներու ընտրութիւնը.

Էտուրրոս Բաշայեան  
Մարտիրոս Մուշակեան  
Ակնէս Սահակեան  
Ժընէս Սանտա  
Ռապըրթ Ծամկոչեան

Բարի եղէք շուտով Առաջնորդարան դրկել Ծխական Խորհուրդի նորընտիր դիւանհի անդամներուն անունները, հասցէները եւ հեռաձայնի թիւերը:

Այս առթիւ ձեր ուշադրութեան կը յանձնենք որ տեղեկագիրներուն ընկերացող ձեր նամակին մէջ պէտք է տրուին անունները Ծխական Խորհուրդի նորընտիր անդամներուն եւ յիշուի թէ քանիակա՞ն քուէ ստացած են անոնք, ինչպէս նաեւ Տարեկան Ժողովին կողմէ ձեռնարկուած որեւէ ընտրութիւն պէտք է կատարուի գաղտնի քուէարկութեամբ եւ երկպառակի ցանկի վրայէն՝ համաձայն Թեմական Կանոնադրութեան:

Կ'օրհնենք Ծխական Խորհուրդի նոր կազմը, եւ կը մաղթենք որ Տէրը Իր հովանիին ներքեւ պահէ համայնքիդ անդամները եւ բոլորիդ եկեղեցանուէր աշխատանքներուն յաջողութիւն պարգեւէ:

Սիրոյ ողջունիւ

ԽԱԺԱԿ ԱՐԲ. ՊԱՐՍԱՄԵԱՆ

Առաջնորդ